ՏԵՂԵԿԱՆՔ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2021 թվականի մայիսի 25-ից գումարված հերթական նիստերի մասին (25.05.2021թ - 27.05.2021թ)

N ը/կ	Հարցի անվանումը	Հեղինակը	Ծանոթություն
1	2	3	4
1.	Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի անդամի ընտրություն	**957-30.04.2021-«Իմ քայլը» խմբակցությունը առաջադրել է Շուշան Սարգսյանի թեկնածությունը**	Գաղտնի քվեարկությանը 132 պատգամավորներից մասնակցել են 82-ը: 79 կողմ, 2 դեմ (1 քվեաթերթիկ անվավեր) ձայներով Շուշան Սարգսյանը ընտրվել է Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի անդամ:
2.	Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի անդամի ընտրություն	**978-21.05.2021-«Իմ քայլը» խմբակցությունը առաջարկել է Սերգեյ Աղինյանի թեկնածությունը**	Գաղտնի քվեարկությանը 132 պատգամավորներից մասնակցել են 82-ը: 77 կողմ, 2 դեմ (3 քվեաթերթիկ անվավեր) ձայներով Սերգեյ Աղինյանը

			ընտրվել է ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի անդամ:
3.	ա) Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ կատարելու մասին բ) «Լիցենզավորման մասին» օրենքում լրացում կատարելու մասին գ) «Պետական տուրքի մասին» օրենքում լրացում կատարելու մասին դ) «Առեւտրի եւ ծառայությունների մասին» Հայաս տանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին	**ՀՀ կառավարություն Կ-958-03.05.2021, 24.05.2021-ՏՀ Արման Պողասյան Անհետաձգելի**	Նախ քննարկվեց և ընդունվեց առաջին ընթերցմամբ՝ 71 կողմ, 0 դեմ, 5 ձեռնպահ ձայներով , ապա քննարկվեց և ընդունվեց երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ՝ 74 կողմ, 0 դեմ, 5 ձեռնպահ ձայներով
4.	Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին **(երկրորդ ընթերցում)**	**ՀՀ կառավարություն Կ-881-26.02.2021-ՏՀ Արման Պողասյան**	Քննարկվեց և ընդունվեց երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ՝ 75 կողմ, 0 դեմ, 2 ձեռնպահ ձայներով
5.	«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու եւ 2017 թվականի դեկտեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՕ-266-Ն օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին»	**ՀՀ կառավարություն Կ-924-05.04.2021-ՏՀ Արման Պողասյան Անհետաձգելի**	Քննարկվեց և ընդունվեց երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ՝ 73 կողմ, 0 դեմ, 4 ձեռնպահ ձայներով

	օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին **(երկրորդ ընթերցում)**		
6.	ա) «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնաց ված ստորաբաժանումների, հիմնարկների եւ անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կա տարելու մասին բ) «Ընդերքի մասին օրենսգրքում» փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին գ) «Էներգետիկայի մասին» օրենքում փոփո խու թյուններ կատարելու մասին դ) «Գնումների մասին» օրենքում փոփոխություն կա տարելու մասին ե) «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում» լրացում կատարելու մասին զ) «Հայաստանի Հանրապետության քրեական դատա վարության օրենսգրքում» լրացում կատարելու մասին է) «Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում» լրացումներ կատարելու մասին ը) «Փողերի լվացման եւ ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին	**ՀՀ կառավարություն Կ-945-23.04.2021, 24.05.2021-ՊԻ Ռուստամ Բադասյան Անհետաձգելի**	Քննարկվեց և ընդունվեց առաջին ընթերցմամբ՝ 75 կողմ, 0 դեմ, 1 ձեռնպահ ձայներով

	թ) «Բանկերի եւ բանկային գործունեության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին ժ) «Վարկային կազմակերպությունների մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին ժա) «Ապահովագրության եւ ապահովագրական գործունեության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին ժբ) «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքում լրացում կատարելու մասին ժգ) «Ներդրումային ֆոնդերի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին		
7.	ա) Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացում կատարելու մասին բ) «Պետական սահմանի մասին» օրենքում լրացում ներ կատարելու մասին **(երկրորդ ընթերցում)**	**ԱԺ պատգամավորներ** Արթուր Դավթյան, Աննա Կարապետյան Պ-827-29.12.2020, 09.04.2021-ՊԻ **Վահե Դանիելյան**	Քննարկվեց և ընդունվեց երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ՝ 71 կողմ, 0 դեմ, 4 ձեռնպահ ձայներ
8.	ա) «Սնանկության մասին» օրենքում փոփոխություն ներ եւ լրացումներ կատարելու մասին բ) «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին **(երկրորդ ընթերցում)**	**ԱԺ պատգամավոր** Արթուր Դավթյան Պ-828-29.12.2020, 12.04.2021-ՊԻ **Վահե Դանիելյան**	Քննարկվեց և ընդունվեց երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ՝ 74 կողմ, 0 դեմ, 1 ձեռնպահ ձայներ
9.	ա) «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին	**ՀՀ կառավարություն** **Կ-930-12.04.2021-ՏՀ** **Վահե Դանիելյան** **Անհետաձգելի**	Քննարկվեց և ընդունվեց երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ՝ 76 կողմ, 0 դեմ, 3 ձեռնպահ ձայներ

	բ) Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին գ) Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ եւ լրացում կատարելու մասին դ) «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների եւ անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին ե) «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին **(երկրորդ ընթերցում)**		
10.	Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին **(երկրորդ ընթերցում)**	**ՀՀ կառավարություն** **Կ-883-01.03.2021-ՏՏԳԲ** **Տիգրան Սիմոնյան**	Քննարկվեց և ընդունվեց երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ՝ 73 կողմ, 4 դեմ, 5 ձեռնպահ ձայներով
11.	«Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին **(երկրորդ ընթերցում)**	**ԱԺ պատգամավորներ** Նիկոլայ Բաղդասարյան, Վիկտոր Ենգիբարյան, Սերգեյ Ատոմյան, Կորյուն Մկրտչյան, Սերգեյ Մովսիսյան, Քրիստինե Պողոսյան Պ-861-10.02.2021, 07.04.2021-ՊԻ	Քննարկվեց և ընդունվեց երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ՝ 73 կողմ, 5 դեմ, 4 ձեռնպահ ձայներով

		Վաչե Քալաշյան	
12.	«Պետական պաշտոններ եւ պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին **(երկրորդ ընթերցում)**	**ՀՀ կառավարություն Կ-871-22.02.2021-ԱՍ Վաչե Քալաշյան**	Քննարկվեց և ընդունվեց երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ՝ 75 կողմ, 0 դեմ, 2 ձեռնպահ ձայներով
13.	ա) «Չափումների միասնականության ապահովման մասին» օրենքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին բ) «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում կատարելու մասին գ) «Հայաստանի Հանրապետության ստուգումների կազմակերպման եւ անցկացման մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին **(երկրորդ ընթերցում)**	**ՀՀ կառավարություն Կ-867-16.02.2021, 09.04.2021-ՏՀ Ավագ Ավանեսյան**	Քննարկվեց և ընդունվեց երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ՝ 75 կողմ, 0 դեմ, 1 ձեռնպահ ձայներով
14.	«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին **(երկրորդ ընթերցում)**	**ՀՀ կառավարություն Կ-879-25.02.2021-ՏՏԳԲ Ավագ Ավանեսյան**	Քննարկվեց և ընդունվեց երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ՝ 74 կողմ, 2 դեմ, 2 ձեռնպահ ձայներով
15.	«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին **(երկրորդ ընթերցում)**	**ՀՀ կառավարություն Կ-926-07.04.2021-ՏՀ Անհետաձգելի Ավագ Ավանեսյան**	Քննարկվեց և ընդունվեց երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ՝ 72 կողմ, 7 դեմ, 3 ձեռնպահ ձայներով

16.	«Մաքսային ծառայության մասին» օրենքում լրացումներ եւ փոփոխություն կատարելու մասին **(երկրորդ ընթերցում)**	**ՀՀ կառավարություն** **Կ-868-16.02.2021,** **09.04.2021-ՏՀ** **Արթուր Մանուկյան**	Քննարկվեց և ընդունվեց երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ՝ 74 կողմ, 0 դեմ, 1 ձեռնպահ ձայներով
17.	Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ կատարելու մասին **(երկրորդ ընթերցում)**	**ՀՀ կառավարություն** **Կ-872-22.02.2021-ՏՀ** **Արթուր Մանուկյան**	Քննարկվեց և ընդունվեց երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ՝ 75 կողմ, 0 դեմ, 1 ձեռնպահ ձայներով
18.	Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ եւ լրացում կատարելու մասին **(երկրորդ ընթերցում)**	**ՀՀ կառավարություն** **Կ-899-15.03.2021-ՏՀ** **Արթուր Մանուկյան**	Քննարկվեց և ընդունվեց երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ՝ 75 կողմ, 0 դեմ, 5 ձեռնպահ ձայներով
19.	ա) «Պետական տուրքի մասին» օրենքում լրացում եւ փոփոխություն կատարելու մասին բ) «Լիցենզավորման մասին» օրենքում լրացում եւ փոփոխություն կատարելու մասին **(երկրորդ ընթերցում)**	**ԱԺ պատգամավորներ** Մխիթար Հայրապետյան, Անուշ Բեղլոյան Պ-874-23.02.2021-ՏՀ **Դավիթ Սահակյան**	Քննարկվեց և նախագիծը երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունելու մասին հարցը մերժվեց՝ 0 կողմ, 69 դեմ, 5 ձեռնպահ ձայներով: Որից հետո հեղինակի առաջարկով՝ ՀՀ ԱԺ որոշմամբ, 74 կողմ, 0 դեմ, 1 ձեռնպահ ձայներով, օրենքների նախագծերի փաթեթի քննարկումը տեղափոխվեց գրավոր

			առաջարկների ներկայացման փուլ
20.	ա) «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին բ) Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին գ) «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում լրացում կատարելու մասին **(երկրորդ ընթերցում)**	**ԱԺ պատգամավորներ** Նիկոլայ Բաղդասարյան, Նարեկ Ղահրամանյան, Վիկտոր Ենգիբարյան, Հայկ Ցիրունյան, Հովիկ Աղազարյան, Գեւորգ Պապոյան, Սերգեյ Մովսիսյան, Կարեն Համբարձումյան Պ-884-02.03.2021, 09.04.2021-ՏՀ **Դավիթ Գրիգորյան**	Քննարկվեց և ընդունվեց երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ՝ 75 կողմ, 0 դեմ, 4 ձեռնպահ ձայներով
21.	Հեռուստատեսության եւ ռադիոյի հանձնաժողովի 2020 թվականի գործունեության մասին տարեկան հաղորդում	**920-31.03.2021-ԳԿ Հեռուստատեսության եւ ռադիոյի հանձնաժողովի նախագահ Տիգրան Հակոբյան**	ԱԺ-ն ընդունեց ի գիտություն
22.	ա) «Հուղարկավորությունների կազմակերպման եւ գերեզմանատների ու դիակիզարանների	**ԱԺ պատգամավորներ Նիկոլայ Բաղդասարյան,**	Քննարկվեց և ընդունվեց երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ՝ 74 կողմ,

	շահագործման մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին բ) Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին **(երկրորդ ընթերցում)**	**Սերգեյ Մովսիսյան, Վիկտոր Ենգիբարյան, Հովհաննես Հովհաննիսյան** **Պ-870-19.02.2021, 12.04.2021-ՏՏԳԲ** **Վաչե Տերտերյան**	2 դեմ, 2 ձեռնպահ ձայներով
23.	«Ժամանակավոր անաշխատունակության եւ մայրության նպաստների մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին **(երկրորդ ընթերցում)**	**ԱԺ պատգամավորներ Գեւորգ Պապոյան, Հերիքնազ Տիգրանյան** **Պ-885-02.03.2021, 30.04.2021-ԱՍ** **Դավիթ Խաչատրյան**	Քննարկվեց և ընդունվեց երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ՝ 76 կողմ, 0 դեմ, 3 ձեռնպահ ձայներով
24.	ա) «Օտարերկրացիների մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին բ) «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում» փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին գ) «Պետական տուրքի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին դ) Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին ե) «Սոցիալական աջակցության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին	**ՀՀ կառավարություն** **Կ-914-29.03.2021, 30.04.2021-ԱՍ** **Արմեն Ղազարյան** **Անհետաձգելի**	Քննարկվեց և ընդունվեց երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ՝ 74 կողմ, 0 դեմ, 6 ձեռնպահ ձայներով

	(երկրորդ ընթերցում)		
25.	ա) «Թմրամիջոցների եւ հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին բ) «Լիցենզավորման մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին գ) «Պետական տուրքի մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին	**ՀՀ կառավարություն Կ-963-05.05.2021-ՏՀ Տիգրան Գաբրիելյան Անհետաձգելի**	Քննարկվեց և ընդունվեց առաջին ընթերցմամբ՝ 72 կողմ, 1 դեմ, 6 ձեռնպահ ձայներով
26.	Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի գործունեության վերաբերյալ տարեկան հաղորդում	**956-29.04.2021-ՖՎ Կենտրոնական բանկի նախագահ Մարտին Գալստյան**	ԱԺ- ն ընդունեց ի գիտություն

Մայիսի 25- 27-ի նիստերի ընթացքում՝

- Հայտարարությամբ հանդես եկան 9 պատգամավոր
- 13 պատգամավոր բանավոր հարցերով դիմեցին կառավարությանը

1. ՀՀ Ազգային ժողովը մերժեց մի շարք օրենսդրական նախաձեռնություններ ՀՀ Ազգային ժողովի յոթերորդ գումարման վեցերորդ նստաշրջանի օրակարգում ընդգրկելու մասին հարցերը՝

ա) «Սահմանամերձ համայնքների սոցիալական աջակցության մասին» օրենքում լրացում կատարելու մասին»,

բ) «Գնումների մասին» օրենքում լրացում կատարելու մասին»

(Հեղինակներ՝ Թագուհի Թովմասյան, Սոֆիա Հովսեփյան, Աննա Գրիգորյան, Պ-902-22.03.2021-ՏՏԳԲ-011/0) - կողմ՝ 23, դեմ՝ 44, ձեռնպահ՝ 11

2. ՀՀ Ազգային ժողովը՝ 62 կողմ, 0 դեմ, 2 ձեռնպահ ձայներով մերժեց «2021 թվականի մայիսի 25-ին գումարված հերթական նիստերի օրակարգի նախագծի երկրորդ բաժինն ընդունելու մասին» ՀՀ Ազգային ժողովի որոշման նախագիծը:

3. Տեղի ունեցավ վերաքվեարկություն, որի արդյունքում մերժվեցին մի շարք օրենսդրական նախաձեռնություններ ՀՀ Ազգային ժողովի մայիսի 25-ից սկսվող հերթական նիստերի օրակարգ ընդգրկելու մասին հարցերը՝

- «Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին (Կ-638-04.06.2020-ՊԻ-011/0 Հեղինակ՝ ՀՀ կառավարություն) օրենսդրական նախաձեռնությունը Ազգային ժողովի հերթական նիստերի օրակարգում ընդգրկելու մասին»
կողմ՝ 0, դեմ՝ 1, ձեռնպահ՝ 13

- «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին (Պ-851-29.01.2021-ՊԻ-011/0 Հեղինակներ՝ Նիկոլայ Բաղդասարյան, Ծովինար Վարդանյան, Վիկտոր Ենգիբարյան, Հայկ Գեւորգյան, Սերգեյ Մովսիսյան, Գեւորգ Պապոյան, Հայկ Սարգսյան, Հովիկ Աղազարյան, Հռիփսիմե Գրիգորյան, Սերգեյ Ատոմյան, Հայկ Ցիրունյան)
կողմ ՝ 0, դեմ՝ 2, ձեռնպահ՝ 14

- «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին (Պ-838-13.01.2021,19.05.2021-ՊԱ-011/0 Հեղինակներ՝ Գեւորգ Պապոյան, Արտակ Մանուկյան)
կողմ՝ 2, դեմ՝ 3, ձեռնպահ՝ 13

- «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին (Կ-904-22.03.2021-ՊԻ-011/0 Հեղինակ՝ ՀՀ կառավարություն)
կողմ՝ 1, դեմ՝ 2, ձեռնպահ՝ 17

- «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին (Պ-912-29.03.2021-ԳԿ-011/0 Հեղինակ՝ Մխիթար Հայրապետյան) օրենսդրական նախաձեռնությունը Ազգային ժողովի հերթական նիստերի օրակարգում ընդգրկելու մասին»
կողմ՝ 0, դեմ՝ 3, ձեռնպահ՝ 16

- «Պետական պաշտոններ եւ պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին (Կ-922-05.04.2021-ԱՍ-011/0 Հեղինակ՝ ՀՀ կառավարություն)
կողմ՝ 0, դեմ՝ 4, ձեռնպահ՝ 18

- «Պետական գույքի մասնավորեցման 2017-2020 թվականների ծրագրի մասին» օրենքում լրացում կատարելու մասին (Կ-933-13.04.2021-ՏՀ-011/0 Հեղինակ՝ ՀՀ կառավարություն)
կողմ՝ 0, դեմ՝ 4, ձեռնպահ՝ 19

- «Անձնական տվյալների ավտոմատացված մշակման դեպքում անհատների պաշտպանության մասին» կոնվենցիան փոփոխող արձանագրությունը վավերացնելու մասին (Կ-947-23.04.2021,24.05.2021-ՊԻ-011/0 Հեղինակ՝ ՀՀ կառավարություն)
կողմ՝ 0, դեմ՝ 3, ձեռնպահ՝ 19